կինը ամուսնուց ծեծվելը չէր համարում նրա կողմից սիրո նշան, ինչպես դա համարում է ռուս կինը, որը իր ժողովրդական երգերի մեջ գանգատվում է, որ ամուսինն իրեն չի ծեծում, ուրեմն իրեն չի սիրում։ Զանգեզուրում էլ տղամարդուն էր պատկանում առաջնակարգ դերը հասարակական կյանքում։ Նույնիսկ այրի կինը ամուսնու մահից հետո չէր մասնակցում անձամբ հասարակական ժողովներին։ Նրա փոխարեն, որպես նրա շահերի պաշտպան, հանդես էր գալիս խնամակալն ու հոգաբարձուն։ Ոչ թե միայն հարսանեկան երթի ժամանակ նորահարսը գնում էր նորափեսայի ետևից, այլև արդեն մի քանի երեխաների մայր դարձած կինը թե՛ փողոցով գնալիս և թե՛ որևէ տուն հյուր մտնելիս պետք է գնար իր ամուսնու ետևից, դրանով շեշտվում էր տղամարդու և կնոջ դիրքի անհավասարությունը հասարակության մեջ։

Բացի աշխատանքի սեռային բաժանումից, ընտանեկան կյանքի խորքում խստությամբ պահպանվում էին հասակային բաժանման պահանջները։ Դարերի ընթացքում ձևավորվել էր թե տան մեջ ով ըստ իր համեմատական հասակի ինչ պարտականություններ ունի կատարելու։ Տղամարդկանց գլուխ[111] տան մեջ համարվում էր տան ավագը, որը լինում էր կամ պապը և նրա մահից հետո նրա ավագ եղբայրը, իսկ հոր եղբայրների բացակայության միջոցին՝ մնացած եղբայրներից ավագը։ Ամենից ավելի կրտսերները լինում էին հոտաղներ, տավարածներ։ Հայտնի էր թե ո՛վ է վէսկու մաճը ղեկավարողը, ո՛վ այս կամ այն զույգ եղներ քշողը։ Սերմնացան միշտ լինում էր տան գլխավորը։ Նրա ներկայությամբ ոչ միայն հարսները չէին կարող նստել, այլև կրտսեր բոլոր տղամարդիկ, որոնք պետք է տեղերից վեր կենային նրա տուն մտնելուն պես և կարող էին նստել միայն նրա կարգադրությամբ։ Միայն պապի ավագ եղբայրն, եթե ինքն էլ արդեն հասակավոր էր, նստած էր մնում նրա մտնելու րոպեին։ Տան գլխավորն էր, որ երեկոյան հացից հետո մանրամասն մշակում էր հաջորդ օրվա աշխատանքների ծրագիրը և կատարում էր նրանց հերթական բաշխումը։ Նա էր, որ օրվա վերջում լսում էր հաշվետվություն՝ ով ինչպես է կատարել իրեն հանձնարարված պարտականությունը, եթե աշխատանքը նրա աչքի առաջ կատարված չէր եղել։ Նա էր լսում և տանտիկնոջ պահանջները, թե դրսից ինչ պետք է բերվի տուն, ցորենը ջաղաց տարվի, փայտը բերվի, գնումներ կատարվեն։ Կանանց մեջ վեճերի դադարեցումը տանտիկնոջ գործն էր, իսկ տղամարդկանց մեջ առաջ եկած դժգոհությունները քննում էր տան մեծ տղամարդը։

Կանացի խմբի գլխավորը տատն էր, նրա մահվան դեպքում պապից հետո հաջորդությամբ ավագ եղբոր կինը. եթե նա էլ մեռած էր լինում, այդ դեպքում գլխավորն էր դառնում տան գլխավորի ավագ որդու կինը, մեծ հարսը։ Պատահում էր, որ տատի մահից հետո տան մեջ կանացի աշխատանքների ղեկավար դառնում էր պապի եղբոր կինը, իսկ սրա մահից հետո՝ նույնիսկ ավագ որդու կինը, և սա ձեռք էր բերում ընտանիքի մեջ մեծ հեղինակություն, մինչդեռ նրա ամուսինը պապի կենդանության օրով մնում էր առաջվա պես երկրորդական դերում։ Իսկ եթե պապը մեռնում էր տատից առաջ, տատը մնում էր իր դերում, իսկ պապի իրավասությունն անցնում էր ավագ որդուն և մայրը ստիպված էր լինում ենթարկվել իր որդու հեղինակությանը։

---

111 Հայկական գերդաստանի մեջ ավագը բացարձակ իշխանություն էր վայելում, կաշկանդված չէր կարևոր դեպքերում գերդաստանի մյուս անդամների հետ խորհրդակցելու պարտականությամբ, ինչպես «զադրուգայի» մեջ էր. ոչ էլ նրանց առջև հաշվետու էր, կամ երբեմն հենց նրանց հավանությամբ էր ընտրվում ոչ թե գերդաստանի ավագներից ընդունակ անդամներից։